*Հավելված N 1*
*ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*
*2026թ.-ի հունիսի 11-ի N1.1 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026թ.-ի հունիսի 11-ի N1.1 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 09.06.2026թ-ին ժամը 09:34:35-ին ստացված հարցադրում/ներ/ը և դրա/նց/ վերաբերյալ 11.06.2026թ-ին տրամադրված պարզաբանում/ներ/ը՝

**Հարցադրում N1:** Հարգելի պատվիրատու, Ծանոթանալով 68-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրին՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ պարզաբանումները. 1. Տեխնիկական բնութագրում նշված են միայն գույների ընդհանուր անվանումները (սև, մոխրագույն, կարմիր, կանաչ, դեղին և սպիտակ), սակայն չեն նշված դրանց կոնկրետ երանգները: Հաշվի առնելով, որ տարբեր երանգների ներկերի արժեքները կարող են էականորեն տարբերվել, խնդրում ենք գույները ներկայացնել RAL (կամ այլ միջազգային ճանաչված գունային համակարգի) կոդավորմամբ: 2. Խնդրում ենք ներկայացնել յուրաքանչյուր գույնի (RAL կոդով) պահանջվող քանակները, որպեսզի մասնակիցները կարողանան ձևավորել հիմնավորված և համադրելի գնային առաջարկներ: Շնորհակալություն համագործակցության համար:

**Պարզաբանում N1:** Հարգելի մասնակից, Ընթացակարգի հրավերում 68-րդ չափաբաժնի մասով սահմանված բնութագրում տեղի է ունեցել վրիպակ, որի մասով հրավերում կատարվում է համապատասխան փոփոխություն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն